

**Ա Ո Ւ Դ Ի Տ Ի   Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

04.10.2013թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.10.2013թ.-ի թիվ 114 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնում անցկացվեց 2013թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտոր՝ Ն.Կարապետյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ՝ Ա. Կոստանյանը:

**Աուդիտի հիմնական ուղղությունները.**

ա/ Օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև բաժնի գործունեությանն առնչվող այլ պայմաններին /պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլն/ գործունեության համապատասխանության հավաստիացում:

դ/ Հաստատված տարեկան աշխատանքային պլանի և կատարված աշխատանքների /ծրագիր, տեղեկանք/ համապատասխանության հավաստիացում:

**Ընդհանուր տվյալներ.**

Աշխատանքը կատարեց Ն.Կարապետյանը: ՌԻՆի բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ և ներքին աուդիտորի որակավորում:

**Բաժնում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը**

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել  ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ  ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ բաժնի ներքին հսկողության համակարգը՝ բավարար է գործել: Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գործառույթների վերաբերյալ իրավական ակտերի, գործունեությանն առնչվող այլ պայմանների պահանջների կատարումը պահպանված է :

**Բաժնի գործառույթների համապատասխանության աուդիտ:**

Համապատասխանության աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև բաժնի գործունեությանն առնչվող գերատեսչական նորմատիվ ակտերին, պաշտոնի անձնագրերով ամրագրված գործառույթների գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու համար, շեշտը դնելով ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման և օրենքների, այլ իրավական ակտերին և պայմաններին բաժնի գործունեության համապատասխանության վերաբերյալ մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացման համար:

**Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ:** Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետի պաշտոնը ընդգրկվում է քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը: Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը, լուծում է բաժնի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ, բաժնի աշխատողին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների, պաշտոնի անձնագրով նախատեսված լիազորությունների կատարման համար: Իր գործունեությունն իրականացնում է ղեկավարվելով պաշտոնի անձնագրով սահմանված օրենքներով, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով, մարզպետարանի կանոնադրությամբ, բաժնի կանոնադրությամբ: Կազմակերպում է մարզի փոքր և միջին ձեռնարկությունների և ձեռնարկատիրական համակարգի աշխատանքների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքները: Կազմակերպում և համակարգում է մարզի սոցիալ-տնտեսական /ըստ ճյուղերի և բնագավառների/ զարգացման ռազմավարության և հիմնադրությունների մշակման աշխատանքները: Կազմում է մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի նախագծերը և ներկայացնում մարզպետի հաստատմանը: Մշակում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր քառամյա ծրագրի նախագիծը: Աջակցում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին՝ սոցիալական ծրագրեր իրականացնելիս: Մարզպետի հաշվետվությունների կազմման նպատակով մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներից և մարզային կազմակերպություններից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն, վերլուծում և ներկայացնում մարզպետին: Վերլուծում է մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերի կատարման ընթացքը: Աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է բաժնի աշխատանքային ծրագրերը: Ապահովում է բաժնի և այլ մարմինների փոխհարաբերությունները:

Համապատասխանության աուդիտի արդյունքում պարզեցինք՝ Պաշտոնի անձնագրով նախատեսված իրավունքների, պարտականությունների և աշխատանքային ծրագրի կատարման միջև անհամապատասխանություններ չկան:

**Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ:** Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը: Բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի: Պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու համար:

Բաժնի գլխավոր մասնագետը բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը: Իրականացնում է մարզի փոքր և միջին ձեռնարկությունների և ձեռնարկատիրական համակարգի աշխատանքների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքները: Մասնակցում է մարզի սոցիալ-տնտեսական /ըստ ճյուղերի և բնագավառների/ զարգացման ռազմավարության և հիմնադրությունների մշակման աշխատանքներին: Իրականացնում է մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի

նախագծերի մշակման աշխատանքները: Մասնակցում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր քառամյա ծրագրի նախագծի կազմման աշխատանքներին: Իրականացնում է Մարզպետի հաշվետվությունների կազմման նպատակով մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներից և մարզային կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկատվության ստացման և վերլուծման աշխատանքներին: Իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները: Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Տեսչության աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին: Իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ: Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին:

Համապատասխանության աուդիտի արդյունքում պարզեցինք՝ Պաշտոնի անձնագրով նախատեսված իրավունքների, պարտականությունների և աշխատանքային ծրագրի կատարման միջև անհամապատասխանություններ չկան:

Աուդիտոր՝	Ն. Կարապետյան
Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ՝	Ա. Կոստանյան